

**«ԻՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱ ԵՐԳԸ».  
ՏԱՐԵԹԻՎԸ ԵՎ ՍԿԶԵՆԱԴՐՅՈՒՐԸ**

«Իտալացի աղջկա երգը» բանաստեղծության ստեղծման տարեթիվը և սկզբնաղբյուրի շուրջ հայ գրականագիտության մեջ տարբեր տեսակետներ են արտահայտվել: Ս.Դարոնյանն այն կարծիքն է հայտնել, թե Մ.Նալբանդյանը բանաստեղծությունը գրել է 1859 թ., բայց հետագայում՝ 1860-1861 թթ., լինելով Իտալիայում, ոգևորվելով Իտալիայի ազատագրական շարժումով՝ ավելացրել է բանաստեղծության վերջին երեք տները: Նա գտնում էր, որ բանաստեղծության տակ պետք է գրվեն երգի տարբեր հատվածների ստեղծման տարեթվերը՝ 1859, 1861, իսկ վերնագրի մեջ Նալբանդյանի կողմից նշված «1859 թվ.» և Ջոդեն քաղաքի հիշատակումը ընդգծում է բանաստեղծության մտահղացման տեղը և ժամանակը<sup>1</sup>: Հետևաբար, «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծության ենթադրվող գրության ժամանակաշրջանը համարում էր 1860թ. դեկտեմբերի 30 (1861 թ. հունվարի 11): Որպես փաստարկ Ս.Դարոնյանը հիշատակում է Ս.Նալբանդյանի մի նամակից բերված տողերը. «Չեմ նախանձում Իտալիայի ազատությանը ...»<sup>2</sup>, հանգեցնել այն հետևության, որ «Իտալացի աղջկա երգը» և Հ.Սվաճյանին ուղղված այդ նամակը գրվել են միաժամանակ Իտալիայում, ունեն բնագրային գույադիպություն:

Ս.Հակոբյանը ևս, համակարծիք լինելով Ս.Դարոնյանին, բանաստեղծությունը բաժանում է երկու հատվածի՝ իտալական, պատմողական հատվածի և վերջին՝ «3 գողտրիկ քառյակների»՝ հասցեագրված հայ ընթերցողին<sup>3</sup>: Բանաստեղծության սկզբնաղբյուրի խնդրի շուրջ նա համոզես եկավ մի ենթադրությամբ, որ «Իտալացի աղջկա երգի» համար Նալբանդյանը կարող էր մղում ստացած լինել հայկական աղբյուրից, այն է՝ Ստեփան Ոսկանի «Արևմուտքից»<sup>4</sup>:

Ս.Հակոբյանը բանաստեղծության սկզբնաղբյուրը որոշող «ոսկե բանալի» է հիշատակում «Արևմուտքի» 1859 թ. 10-16 համարները, որոնց մեջ Ս.Ոսկանը, ոգևորված իտալական ժողովրդի ազգային - ազատագրական շարժմամբ, փորձում է իր ընթերցողների ուշադրությունը դեպի Իտալիա տանել: Ավստրո - իտալական պատերազմին նվիրված հաղորդագրություններին նա կցում է իր մտորումները: Այս առիթով հիշատակում է Գարիբալդին, ալպյան որսորդներին: Ս.Ոսկանը «փափկասուն» բառին եղիշեի խանդավառ երկից կցում է ծանոթագրություն. «Տիկնայք փափկասունը Իտալիո աշխարհին, որ

գրգեալք և զգվեալք էին ... եղիշե»<sup>6</sup>։ Մ.Յակոբյանը գտնում է, որ ոսկանյանական սկզբնաղբյուրը պարզապես խթան եղավ, որպեսզի նա արտահայտեր այդ զգացողություններն ու սրտի կրակը։ Իսկ Նալբանդյանը «Ատ.Ոսկանի տեսությանը ծանոթացել է նախքան նրա հրատարակվելը կամ միաժամանակ են ծանոթացել միևնույն աղբյուրին»<sup>6</sup>։

«Յուսիսափայլի» 1860թ. 5-րդ համարը գրաքննությունը տպագրության թույլատրեց ապրիլի 21-ին, իսկ 1860 թ. մայիսի 7-ին «Յուսիսափայլի» 1-ին, 2-րդ, 3-րդ համարների ամսատետրակները ուղարկվում են բաժին (4-րդը դեռ թույլտվություն չէր ստացել տպագրության<sup>7</sup>)։ «Յուսիսափայլի» չհրատարակման համար պատճառներ կային։ Դա նշանակում էր, որ 1860 թ. 5-րդ ամսատետրակը ժամանակագրական տեսանկյունով առաջինն էր 1860 թ. հյուսիսափայլյան մյուս համարներից։ «Հիշատակարանի» այս հատվածներում Կոմս Էմանուելը ներկայացնում է արտասահմանյան ուղևորության ժամանակ իր տեսածն ու զգացածը, որոնք բովանդակում էին այն ամենը, ինչը վաղուց դարձել էր Մ.Նալբանդյանի կյանքի հոգին, արյունը, ուղեղը։ Նա արդեն եղել էր Վարշավայում, Փարիզում, Լոնդոնում, Բրյուսելում, իսկ մայիսի 31 - հունիսի 17՝ Գերմանիայում։ «Հիշատակարանում» տեղ գտած հատվածները, բանաստեղծությունները՝ այդ շրջանում ստեղծված, գրված են 16/28 մայիս - հունիս 18/30 ընթացքում։

«Հիշատակարանի» ԺԳ հատվածում Նալբանդյանը ներկայացնում է ազատության գաղափարի իրականացման հիմնախնդիրները, ցավով նշում, որ ազգության մեքենան ջարդված է. ազգը լուսավորելու գաղափարն իրագործողը դարձնում էր, սակայն այն չէր կարող ներկա հայ կյանքի ավերակների մեջ պատրաստել ճշմարիտ հայ։ Հայ մարդու դաստիարակության, ազգի վերանորոգության խնդիրը կախված էր ընտանիքից, քանի որ գերդաստանների մայրերը ազգի մայրերն են։ Մայրաքաղաքներում գտնվող հայ կանանց հայությունը, ինչպես ասում էր Նալբանդյանը, հիշվում էր՝ տարին մեկ անգամ հայոց եկեղեցի գնալով, խոստովանությունը կատարվում էր օտար լեզվով։ Ազգին սպառնացող վտանգը առավել ճշմարիտ ներկայացնելու նպատակով Մ.Նալբանդյանը հիշատակում է հայ ոգին դարերում անմահացնող V դ. հայոց փափկասուն տիկնանց կերպարը, որոնք Ավարայր գնացին՝ չարչարակից լինելով առաքինի զինվորներին։ Այդ ոգին էր, որ ապրեցրեց հայությանը։

Հիշատակելով V դ. հայ կանանց հերոսությունը՝ Նալբանդյանը սկսում է առանց չակերտների մեջբերում անել Եղիշեի մատյանի<sup>8</sup> այդ հատվածը։ Վերակերտում հայ առաքինի կանանց կերպարը, որոնք մոռացան յուրյանց կանացի տկարությունը, յուրյանց փափկասուն կյանքը, հակադրում է նրանց

ժամանակակից հայուհու կերպարին: Նույն հակադրությունն արտահայտվում է «Իտալացի աղջկա երգի» նշված հատվածում. «Քայց մեր կանայք ... ո՛ւր եղիշե, ո՛ւր մեր տիկնայք փափկասուն»:


«Հիշատակարանում» կերտելով «մեծահոգի և խնկելի» քաջ արմենուհիների կերպարը՝ Նալբանդյանը մեծ պարտականություն է թողնում հայ կանանց վրա՝ «նմանել նոցա» և ճիշտ հասկանալ մայրության խորհուրդը: Հակադրության նպատակն էր վերականգնել նախնայաց նվիրական ոգին, ցույց տալ, թե հայ կյանքում որքան կարևոր դեր ունի հայ մայրը, որը սովորեցնում է լեզուն, հոգով և սրտով հայություն, անձնագրի սեր դեպի ազգությունը, դեպի մեր ազատ կրոնը:

«Հիշատակարանի» ժԳ հատվածում հայ կանանց խորհրդի և «Իտալացի աղջկա երգը 1859 թ-ից» բանաստեղծության մեջ խտացված նույն գաղափարի հիշատակումը ցույց է տալիս, որ այն ստեղծագործական նույն ներշնչանքի ծնունդն է, և որ վերջին երեք տները գրված են նախորդ տների հետ միաժամանակ:

Մ.Նալբանդյանի 1859 թ. արտասահմանյան ուղևորությունը համընկավ եվրոպան ցնցող ազգային - ազատագրական պայքարի վերելքի շրջանին: Պատերազմն ընդդեմ Ավստրիայի սկսվել էր 1859 թ. ապրիլին: Գարիբալդիի դրոշի ներքո հավաքվեցին ժողովրդական կամավորներ, որոնք դարձան ազատարար զինվորներ: 1860-1861 թթ. պատերազմը շարունակվում էր: Իտալիայի միավորման համար մղվող այս պատերազմի արդյունքում լուծվեց կարևոր խնդիր՝ երկրի հյուսիս - արևելքն ազատագրվեց ավստրիական լծից. ստեղծվեց ազգային միասնական պետություն:

Գարիբալդիի և նրա ազատարար ջոկատի անունն ու անձնուրաց գործերի լուրը տարածվեցին ամբողջ եվրոպայում: Պատահական չէր, որ «Հյուսիսափայլի» 1861 թ. մարտ - օգոստոս ամիսների ամսատետրակներում տպագրվել է Գարիբալդիի կյանքի պատմությունը, իսկ նույն թվականի նոյեմբեր ամսին՝ «Իտալացի աղջկա երգը 1859 թ-ից» բանաստեղծությունը: Իտալացի ազգային հերոսի պատմությունը հեղինակը ներկայացնում է ճանապարհորդների, զորավարների, ժողովրդի մեջ տարածված պատմությունների հիման վրա:

«Հյուսիսափայլի» 1861 թ. օգոստոսի ամսատետրակում «Գարիբալդիի կյանքը» հատվածում հիշատակվում է նրա զինվորների՝ ալպյան որսորդների մասին, որոնց մասին նշվում է և «Արևմուտքի» 1859 թ. 13-րդ համարի էջ 104-ում (Գարիբալդիի զինվորների ծագումը, բանակի նկարագրությունը): «Հյուսիսափայլի» 1861թ. օգոստոսի 112 էջում հեղինակը նկարագրում է



Գարիբալդիի զորախմբի մեջ կռվող կանանց քաջությունը, որոնք ամեն տեղ հետևում էին իրենց ամուսիններին, եղբայրներին, հայրերին, հազնված էին ինչպես տղամարդիկ և շատ անգամ մասնակից էին պատերազմի գործերին: Առանձնապես հերոսությամբ աչքի էին ընկնում Բրեշիա քաղաքի կանայք, որոնք այրական քաջությամբ էին պատերազմում:

Իտալացի կանանց քաջության նկարագրությունը հիշեցնում է Ավարայրի «փափկասուն տիկնանց»: Ըստ էության, սա այն հատվածն է, որը ներշնչանքի աղբյուր է հանդիսացել հեղինակի համար: Ստեփան Ռսկանը հիշատակում է հայրենասեր Բրեշիա քաղաքի մասին, ուր գտնվում էր այդ ժամանակ Գարիբալդին: Գարիբալդիի կյանքի պատմությունը ներկայացնում է Մարտիրոս Դրաչյա ստորագրությամբ «Հյուսիսափայլի» աշխատակիցը, որն ընդառաջ է գնում հայ մամակազրի՝ Ռուբեն Զալալյանցի խնդրանքին: Վերջինս, կարդալով «Современник» ամսագիրը, խնդրում է Մ.Դրաչյային, «արժանի հարցասիրության վարքագրությունը ռուսերենից փոխել դեպի հայ բարբառ»<sup>10</sup>:

«Современник» ամսագրի 1859 թ. 75, 76 հատորների քաղաքական բաժնում նկարագրված է քաղաքական իրադրությունը Եվրոպայում մայիս, հունիս, հուլիս, օգոստոս ամիսներին: Հունիս - հուլիս ամսատետրակներում մանրամասնորեն ներկայացվում է ավստրո - իտալական պատերազմի ընթացքը, ուր պատմվում է Գարիբալդիի և նրա ալպյան որսորդների կատարած հերոսությունների մասին: «Современник»-ում մանրամասնորեն նկարագրվում են ավստրո - իտալական պատերազմի նշանակալից մարտերը՝ Կոմո (մայիս 18), Լոմբարդիա (մայիս 22), Բրեշիա (հունիս 7): «Հյուսիսափայլում» թարգմանված են գլխավորապես Գարիբալդիին և նրա զինվորներին առնչվող հատվածները:

Մ.Նալբանդյանը հունիսի 18-ին գտնվում էր Համբուրգում, որտեղ և վերսկսել էր ընդհատված «Հիշատակարանը»՝ մայիս 16/28-ից սկսած:

Սա նշանակում է, որ Մ.Ռսկանի «Արևմուտքի» 1859 թ. 13-րդ համարում տպագրված հատվածը չէր կարող լինել Մ.Նալբանդյանի բանաստեղծության համար որպես սկզբնաղբյուր, քանի որ այն հրատարակվել է հուլիսի 1-ին<sup>11</sup>: Ակնհայտ է, որ Նալբանդյանը ծանոթ էր 1859թ. «Современник»-ի հոդվածներին: Գտնվելով Համբուրգում (Նալբանդյանը Փարիզ է գնացել երկրորդ անգամ հուլիսի 4-ին)<sup>12</sup>, նա մանրամասնորեն տեղեկացված էր քաղաքական կյանքի իրադարձություններին:

Գարիբալդին և նրա ալպյան որսորդները կենդանի լեգենդ էին դարձել ամբողջ Եվրոպայում: Ժամանակակիցները գիտակցում էին, որ Գարիբալդին կլինի նյութ քաջագնական երգերի, ազգային տաղերի, քաջագործական

գրույցների և չափազանց հրաշապատում ավանդությունների: Գարիբալդին մի գերբնական մարդ էր, մի տեսակ կարող ոգի Իտալիայի<sup>13</sup>:

Գարիբալդիի և նրա ալպյան որսորդների պայքարը հանուն ազատության ճշմարիտ հայրենասիրության կենդանի մղում էր, հայերի մեջ եղիշեական ոգու արթնացման միջոց, որի ուժը պիտի հակադրվեր հայ ճիզվիտների դարանագործությանը:

«Մանկության օրեր», «Ազատություն», «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունները գեղարվեստական ամբողջացումն էին ազատության գաղափարի, որը դեմ էր ճիզվիտական հոգուն, կորստաբեր իմաստակությանը: Նալբանդյանը իր սրտի վկայությամբ գիտեր, որ ազատորեն խոստովանող հայը կարող էր ձգտել ազատության:

«Արևմուտքի» 1859 թ. (սեպտեմբերի 5) 18-րդ համարում տպագրված է «Միշլեին նոր գիրքը» հոդվածը, որի մեջ Ս.Ոսկանը ներկայացնում է ֆրանսիացի հեղինակի գործը, ուր նա փորձել է մեկնաբանել եվրոպացի կնոջ բնությունը, ընկերային վիճակը, ամուսնությունը և «անոր վերաբերող բոլոր խնդիրները և այլ մանրուքներ և իր կարծիքները ի գիր առնուլ»: Հեղինակը «քանի մը ժամ զվարճանալեն ետև» հայտնում է, որ այնտեղ «օգուտ քաղելու նյութ կա արևելյան ժողովուրդներու համար»<sup>14</sup>: Դրան հաջորդող հատվածում Ս.Ոսկանը, կարևորելով հայ մոր կերպարը, ընդգծելով նրա անփոխարինելի դերը հայ ընտանիքի, լեզվի, ազգապահպանության, կրոնի խնդրում, արտահայտում է ճիշտ նույն գաղափարը, ինչ Ս.Նալբանդյանը «Հիշատակարանի» ԺԳ գլխում V դ. եղիշեի փափկասուն տիկնանց հերոսական կերպարը կերտելիս<sup>15</sup>:

Փաստարկները բերում են այն համոզման, որ «Արևմուտքի» 1859 թ. 13-րդ հոդվածը, ուր նշվում է եղիշեի «Տիկնայք փակասունը Իտալիո աշխարհին ... եղիշե» տողը, չէր կարող «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծության համար սկզբնաղբյուր ծառայել: «Արևմուտքը» կողմ էր Ս.Նալբանդյանի գաղափարներին ազգի վերականգնման և ազատության նվաճման խնդրում:

Ս.Ոսկանը Նալբանդյանի գաղափարակիցն էր. «Արևելքը» փակվեց «հայ ճիզվիտի չարագործության պատճառով», իսկ «Արևմուտքը», 1859 թ. տպագրելով իր վերջին համարը, արգելվեց՝ ազատական գաղափարները տարածելու համար:

Սերկանտիմիի «Սապրիի հնձվորուհին» լեգենդը սկզբնաղբյուր հանդիսացավ ոչ միայն «Իտալացի աղջկա երգի», այլև համաշխարհային գրականության մեջ քաղաքական քնարերգության այլ գլուխգործոցների ծնունդի համար:

1858 թ. մարտ - ապրիլ ամիսներին ռուս բանաստեղծ Ն.Օգարյովը գրեց «Մյուս ափից» պոեմը: Օգարյովի նպատակն էր հայրենակիցների մեջ իտալացի ազգային հերոսների (Օրսինի, Պիանորի և այլք) օրինակով արթնացնել հերոսական ոգին՝ հասնելու ազատության: Գիտակցված մահվան գնացած իտալացիների կյանքի վերջին վայրկյանների գեղարվեստական պատկերը նա ներկայացնում է որպես եղերերգ: Այդ երգը մեծ գործ ուներ ամելու: Նա «պիտի թռչեր աղմկոտ ծովի վրայով»<sup>16</sup>, հասներ հայրենակիցների ականջին, որպեսզի նրանք լսեին և հասկանային երգի ճշմարիտ ոգին՝ «ուզած, թե չուզած»: Մ.Նալբանդյանի նպատակը նույնն էր: Նա անվանեց բանաստեղծությունը «Իտալացի աղջկա երգ», որովհետև այդ հերոսական երգը կարող էր հաղթահարել և ժամանակը, և տարածությունը, վարդապետաց ոգին արթնացնել հայի մեջ, հիշեցնել, որ վարդապետաց չհանդուրժեցին օտարի լուծը՝ գերադասելով իմացյալ մահը ծնկաչոք ապրելուց:

Այնպես որ, «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծության մեջ Նալբանդյանը պատկերում է իտալական իրականությունը, Գարիբալդիի և Մաժժինիի ղեկավարած ազատագրական պայքարը ավստրիական բռնության դեմ: Բայց նա 19-րդ դարից կամուրջ է նետում 5-րդ դար, տեսնում այն ընդհանրություններն ու տարբերությունները, որ ունեին հայ և իտալացի կանայք:

Մեր ներկա պետական հիմներգի մասին բանավիճողները պետք է նկատի ունենան այս համգամանքը:

<sup>1</sup> Մ.Ղարոնյան, Միջայել Նալբանդյան, Ե., 1979, էջ 345:

<sup>2</sup> Մ.Նալբանդյան, Երկեր, հ. 5, Ե., 1984, էջ 116:

<sup>3</sup> Սովետական գրականություն, Ե., 1978, թիվ 2, էջ 147:

<sup>4</sup> Մ.Նալբանդյան, Երկեր, հ. 1, Ե., 1979, էջ 498:

<sup>5</sup> «Արևմուտք», Փարիզ, 1859, թիվ 13, էջ 104:

<sup>6</sup> Սովետական գրականություն, թիվ 2, էջ 149:

<sup>7</sup> Ա.Ինճիկյան, Միջայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրություն, էջ 136:

<sup>8</sup> Եղիշե, «Վարդանի և Դայոց պատերազմի մասին», Ե., 1989, էջ 406:

<sup>9</sup> Մ.Նալբանդյան, Երկեր, հ. 1, էջ 109:

<sup>10</sup> «Զյուսիսափայլ», Մ., 1861, ապրիլ, էջ 192:

<sup>11</sup> Մ.Նալբանդյան, Երկեր, հ. 1, էջ 438:

<sup>12</sup> Ա.Ինճիկյան, Միջայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրություն, էջ 120:

<sup>13</sup> «Զյուսիսափայլ», Մ., 1861, թիվ 8, էջ 124:

<sup>14</sup> «Արևմուտք», թիվ 18, էջ 140:

<sup>15</sup> Մ.Նալբանդյան, Երկեր, հ. 3, էջ 187:

<sup>16</sup> Н.П.Огарев, Избранное, М., 1977, стр. 271.